Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի „Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին,, թիվ 286 և 19.01.2006 թվականի „Արտաշատ համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,, թիվ 33-Ն որոշումներով.
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու Արտաշատ համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերից ներքոհիշյալ հողատարածքը՝

Լոտ 1- Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 24/3 հասցեում /ծածկագիր՝ 03-001-0029-0040/, 0,00302 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածք:

2. Հողատարածքի աճուրդային կարգով օտարման մեկնարկային գինը սահմանել նրա կադաստրային արժեքի 100% չափով:
3. Աճուրդ անցկացնել բաց դասական եղանակով:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

2. ԴԵՐՄՈՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ԽԱԶԱՏՅԱՆ ԿԱՄՈ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՈՒՒԶԱՆ *meccag*

5. ՄԱՅՏԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *[Signature]*

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՐԻԵՆԱԶ *[Signature]*

7. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՔՐԻՅԸ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 280219: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 25-Ա

**ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի „ Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին,, թիվ 286 որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը. **ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

1. Թույլատրել կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով առանց մրցույթի օգտագործման տրամադրելու „ Պրեսս-ստենդ,, ՍՊԸ-ին Արտաշատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Օգոստոսի 23 փողոցի թիվ 20/5 հասցեում գտնվող 0,00065 հա /ծածկագիր՝ 03-001-0042-0046/ և Հ.Թովմասյան փոցոցի թիվ 11/6 հասցեում գտնվող 0,00065 հա մակերեսով /ծածկագիր՝ 03-001-0057-0073/ հասարակական կառուցապատման հողատարածքները:
2. Կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրվող հողատարածքների գները սահմանել նրանց կադաստրային արժեքի 60 %-ի չափով:

Կողմ -7

Պեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

2. ԴԵՐՄՈՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՄՈ

- 4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՈՒՒԶԱՆ *Արմենյան Հանրապետություն*
- 5. ՄԱՅՆԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ *Հարություն*
- 6. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՐԻԲՆԱԶ *Հերիբնազ*
- 7. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՐԻԻԵԼ *Գարիիել*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Հարություն



ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 280219: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 26-Ն

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ /ԿԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ԿԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ/ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՅԼ ՏԱՐԻԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.10.2017 թվականի թիվ 1275-Ն որոշումը. ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել Արտաշատի համայնքապետարանի կողմից կառուցապատողներին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևաթղթում նախատեսվող կառույցի տանիքներին, ձևակառուցումներին և արտաքին այլ տարրերին ներկայացվող ճարտարապետական պահանջները, այդ թվում նաև գունային սահմանափակումները:
2. Արտաշատ համայնքի նոր կառուցվող շինությունների տանիքների գունային ներկապնակը սահմանել՝ 121 39 25 3003 49/31110; 128-96-0:

Կողմ -7

Դեմ -0

Չեռնակահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

2. ԴԵՐՄՈՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՄՈ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՈՒՌԶԱՆ

5. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

7. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿՈՐ՝

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, /010/ 280219: /0235/ 22383 artashatmeria@bk.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 27-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 55-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով. ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

1. Արտաշատ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 29-ի՝ „Արտաշատ համայնքի տարածքում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին„ թիվ 55-Ա որոշման 1-ին կետում „էլեկտրոստանդարտ„ բառը փոխարինել „էլեկտրոնստանդարտ„ բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

2. ԴԵՐՍՈՅԱՆ ԱՐՄԱՆ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՍՈ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՈՌՈՋԱՆ

5. ՄԱՅՍՎԱՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՐԻԲԵԱԶ

7. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱԲՐԻԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆ



ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2018 թվականի
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար ԿԱՐԵՆ ԲԵՆԻԱՄԻՆՅԱՆԸ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու .2018թ. փետրվարի 27-ի
թիվ 15-Ա որոշմամբ

ԱՐՏԱՇԱՏ 2018Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	100
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....	113
4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ.....	37
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	444

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտաշատ համայնքի տարեկան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ ենթադրում է համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային աշխատանքային և սոցիալական ռեսուրսների կամ կապիտալների ընդգրկում մեկ կարևոր փաստաթղթի մեջ, որն էլ ուղղորդելու են 2018թ. ընթացքում տնտեսական, սոցիալական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի առանձին ոլորտների զարգացմանը:

ՏԱՊ-ի հիմքում ընկած է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները, համայնքում առաջացած խնդիրներին արդյունավետ լուծում տալու համար:

Արտաշատ համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Համակարգել 2018 թվականի անելիքները
 - Որոշել համայնքի զարգացման ծրագրերի առաջնահերթությունները
 - Գնահատել համայնքի ներքին ռեսուրսները
 - Ժամանակին բացահայտել ենթադրվող պակասորդները /դեֆիցիտները/
 - Համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրագրելի ման շրջանակներում համախմբել ընթացիկ տարվա համար համայնքի հնգամյա զարգացման ծրագրով սահմանված բոլոր ծրագրերն ու միջոցառումները:
 - Կոնկրետացնել ծրագրերի և միջոցառումների ֆինանսական աղբյուրները և միջոցները:
-

Արտաշատ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է հինգ հիմնական բաժիններից.

Առաջին բաժնում սահմանվում են համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

Երկրորդ բաժնում ներկայացվում են համայնքի 2018թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը /ըստ ոլորտների/:

Երրորդ բաժնում ներկայացվում են համայնքային գույքի կառավարման 2018թ. ծրագիրը:

Չորրորդ բաժնում ներկայացվում են համայնքի ՏԱՊ-ի ֆինանսական պլանը:

Հինգերորդ բաժնում ներկայացվում են համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի տեսլականը՝

Արտաշատ քաղաքը համարվում է Արարատի մարզի մարզկենտրոնը: Գտնվում է Երևան քաղաքից 30կմ հեռավորության վրա: Ունի զարգացած գյուղատնտեսություն, որը մերձքաղաքային տնտեսության ուղղվածություն ունի: Այն գյուղատնտեսական մթերքներ է մատակարարում մայրաքաղաք Երևանին: Համայնքն ունի 1474հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում 872 հա վարելահող, 277,3 հա պտղատու և խաղողի այգիներ: Զարգացած է նաև արդյունաբերությունը, հատկապես գյուղատնտեսական ապրանքների վերամշակման, շինարարական ապրանքների արտադրության ուղղությամբ:

Քաղաքի կենտրոնը, համեմատած ծայրամասերի, բարեկարգ է, մաքուր, հագեցված է հանգստի գոտիներով, կանաչապատ է: Նորմալ գործում են համայնքի ազգաբնակչությանը սպասարկող ենթակառուցվածքները: Զարգացում է ապրում փոքր ու միջին ձեռնարկությունները:

Համայնքի բնակչությանը մատուցվում է անհրաժեշտ հանրային ծառայություններ: Ըստ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, համայնքի բնակիչները ցանկանում են ունենալ էլ ավելի զարգացած, մաքուր և բարեկարգված, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներն ու նկուղները, մուտքերի դռներն ու մուտքերի աստիճանավանդակները վերանորոգված, փողոցներն ու բակերը բարեկարգված և ասֆալտապատված քաղաք: Այդ նպատակով ենթադրվում է ավելացնել համայնքի բյուջեն սեփական միջոցների հաշվին: Ավելացնել հողի հարկի և գույքահարկի ծավալները ընթացիկ հարկերի և ապառքների հաշվին: Ճշտորեն կազմակերպել աղբահանության պայմանագրերի կնքման և վճարների գանձման և աղբահանության գործառույթները: Իրականացնել բվազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման համար նախատեսված միջոցների, այն է՝ սպասարկման համար բնակչության հետ պայմանագրերի կնքումը և սպասարկման գործառույթների իրականացումը:

Համայնքի տեսլականն է նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսական զարգացումը, ինչպես նաև ջերմոցային նոր տնտեսությունների կառուցումը:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	5	4
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	54,7	55,5
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	28262	29000
/Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում	8125	10115
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատողների թիվը (մարդ)	430/3500	450/4000

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Արտաշատ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցվող հանրային ծառայությունից %/:	80	90
	Համայնքի բնակիչների մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված որոշումների նախապատրաստման գործընթացի մեջ %/:	5	10
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների կազմում, %	54,7	55,5
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Արտաշատ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում պաշտպանության կազմակերպման ոլորտում ներդրումային ծրագրեր չեն	Համայնքապետարանի աշխատակազմի միջոցառումների պլաններով նախատեսված է էլ ավելի	-	-

<p>նախատեսվել:</p>	<p>ամրապնդել կապը համայնքի տարածքում գործող զինվորական գործառնության հետ, կազմակերպել փոխադարձ այցելություններ, հանդիպումներ տոնական օրերի և տարելիցների հետ կապված: Այդ բոլոր նպատակաուղղել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության բարելավմանը:</p>		
<p>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</p>			
<p>ՀՀ ՁԾ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել</p>	<p>Մշտապես մասնակցել կազմակերպված միջոցառումներին, սեմինարներին, հայտարարված ուսուցողական տազնապներին և զորավարժություններին</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>			
<p>Քաղաքաշինության համարել Արտաշատ քաղաքի զարգացման կարևոր ուղղություններից մեկը: Կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցում:</p>	<p>Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %</p>	<p>70</p>	<p>80</p>
<p>Ոլորտ 5. Հողօգտագործում</p>			
<p>2018 թվականին հողօգտագործման ոլորտում կապիտալ ներդրումներ չեն նախատեսվում: Ունենք 2,15հա, որից 0,15 հա բնակավայրերի, 10հա գյուղ.նշանակության հողատարածքների կառավարման ծրագիր:</p>	<p>Հողատարածքների կառավարման ծրագրով համալրել համայնքային ֆինանսական միջոցներ /ֆոնդային բյուջեն/ /վն. դրամ/:</p>	<p>22000,0</p>	<p>22000,0</p>
<p>Ոլորտ 6. Տրանսպորտ</p>			

<p>Ներհամայնքային նշանակության փողոցների ու ճանապարհների բարեկարգում, նրան շահագործման և պահպանման ծառայությունների որակի բարելավում:</p> <p>-Ճանապարհային անվտանգ երթևեկության նշանների տեղակայում: Այն իրականացնել ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, ելնելով անվտանգ երթևեկության ապահովման շահերից:</p>	<p>Բարեկարգ և ասֆալտապատ փողոցների, շենքերի բակերի մակերեսների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ /%/:</p>	<p>Փողոցներ՝ 40% Բակեր՝ 60%</p>	<p>45% 65%</p>
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
<p>ՀՀ ԶԾ-ում 2018 թվականի համար առևտրի և ծառայությունների ոլորտում կապիտալ ներդրումային ծրագրեր չեն նախատեսվում և այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>Աշխատանքները նպատակաուղղել համայնքի տարածքում առևտրի կանոնների պահպանմանը ՀՀ գործող օրենքներին համապատասխան առևտրի կանոնների պահպանման ուղղությամբ:</p>		
Ոլորտ 8. Կրթություն			
<p>Ապահովել համայնքում կրթական ծառայությունների արդյունավետ մատուցումը</p>	<p>Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %</p>	<p>12</p>	<p>15</p>
	<p>Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %</p>	<p>85</p>	<p>90</p>
	<p>Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %</p>	<p>80</p>	<p>85</p>
	<p>Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %</p>	<p>20</p>	<p>30</p>
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			

Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	15	17
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճը, %	1	2
	Համայնքում մշակութային հիմնարկ հաճախող երեխաների տեսակարար կշիռն դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի մեջ, %	25	30
Ոլորտ 10. Առողջապահություն			
ՀՀԶԾ-ում 2018 թվականի համար առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-		
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Ապահովել Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը	Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների թվի կազմում, %	30	40
	Մատուցվող մարզական ծառայությունների մատչելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	40	45
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Օգնել համայնքի կարիքավոր, վիրավոր և գոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ բարելավելու նրանց սոցիալական վիճակը: Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին:	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից %	70	75
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
ՀՀԶԾ-ում 2018 թվականի համար գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			

ՀՀԶԾ-ում 2018 թվականի համար անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Համայնքի բնակիչների բավարարվածությունը համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման իրականացման ուղղությամբ:	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումից բնակչության բավարարվածության բարձրացում %	80%	85%
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
Այդ ոլորտը չի ներառվել ՀՀԶԾ-ում:			
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը արտահայտվում է՝ 1. համայնքի տարածքում սանիտարական մաքրման, աղբահանության կազմակերպմամբ 2. բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանման մասնակցությամբ:	Համայնքի բնակիչների տեղական ինքնակառավարման մասնակցության տեսակարար կշռի ավելացումը ըստ նշված բնագավառների:	1. 60% 2. 50%	70% 65%

**2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ
(ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)**

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
Ոլորտ 1. Ընդհանուր		
1.	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, համայնքի աշխատակազմի, ենթակառուցվածքների գործունեության պահպանում	135031.1
Ընդամենը		135031.1
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում		
1.	2018 թվականին պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-
Ընդամենը		-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում		
1.	2018 թվականին արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-
Ընդամենը		-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն		
1.	Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի հիմնանորոգում, տանիքների ընթացիկ նորոգում, բազմաբնակարան բնակելի շենքերի սպասարկման ծառայության իրականացման ապահովում	37660,0
2.	Փողոցների լուսավորության ապահովում	15200,0
3.	Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի խաղահրապարակների կապիտալ վերանորոգում	2600,0
4.	Արտաշատ համայնքի արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում	5300,0
Ընդամենը		60760,0
Ոլորտ 5. Հողօգտագործում		

	2018 թվականին հողօգտագործման ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-
Ոլորտ 6. Տրանսպորտ		
	Արտաշատ համայնքի ճանապարհային տնտեսության պահպանություն/ընթացիկ և կապիտալ նորոգում/	19500.0
Ընդամենը		19500,0
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ		
	2018 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում:	-
Ընդամենը		-
Ոլորտ 8. Կրթություն		
1.	Նախադպրոցական և արտադպրոցական կրթության կազմակերպում	
	Արտաշատ համայնքի թվով 7 մանկապարտեզների արտադպրոցական կենտրոնի, երաժշտական դպրոցի, գեղարվեստի դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի ապահովում	326811.1
Ընդամենը		326811.1
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ		
1.	Մշակութային և հոգևոր կյանքի բարելավում	27121.0
Ընդամենը		27121,0
Ոլորտ 10. Առողջապահություն		
	2018 թվականին առողջապահության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-
Ընդամենը		-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ		
1.	Արտաշատ համայնքի մանկապատանեկան համալիր մարզադպրոց և Ռ. Գոլեցյանի անվան ՕՇ ըմբշամարտի մարզադպրոց ՀՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի ապահովում	71950.0
Ընդամենը		71950,0
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն		
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակչությանը	2500.0
Ընդամենը		2500,0
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն		
	2018 թվականին գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում	-
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա		
1.	Անասնաբուժական ծառայությունների մատուցում	-
Ընդամենը		-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն		

1.	Արտաշատ համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների, շրջակա միջավայրի պաշտպանության գծով տարվող այլ աշխատանքների իրականացում	62900.0
Ընդամենը		62900,0 -
Ոլորտ 16. Զբոսաշրջություն		
1.	ՀՀԶԾ-ում այդ ոլորտը չի նախատեսվել:	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը		
1	Համայնքի տարածքի սանիտարական մաքրման, աղբահանության կազմակերպման, բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանմանը համայնքի բնակչության մասնակցության:	61360,0
Ընդամենը		
Ընդհանուրը		

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/ h	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
Ոլորտ 1. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն		
1.	Համայնքի Ներքսիսյան փողոցի թիվ 9, Երևանյան փողոցի թիվ 7, Արագի փողոցի թիվ 39 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնական վերանորոգում:	33, 000,0
2.	Իսակով փողոցի թիվ, թիվ 47/1; 47/2; 47/3 ջրահեռացման ներքին ցանցի հիմնավոր նորոգում	4.000,0
3.	Համայնքի "թիվ 5 մանկապարտեզ" ՀՈԱԿ-ի 2-րդ մասնաշենքի տանիքի հիմնավոր նորոգում, ներքին հարդարման աշխատանքների կատարում	20,000,0
4.	"Արտաշատի քաղաքային արտադպրոցական կենտրոն" ՀՈԱԿ-ի հիմնական մասնաշենքի և հանդիսությունների դահլիճի հիմնավոր նորոգում:	20,200,0
5.	Այվազովսկու փողոցի շարունակության, Օգոստոսի 23 փողոցից դեպի ներքև /հարավային հատված/ գոյություն ունեցող բաց դրենաժների մաքրում, փակ դրենաժի կառուցում:	10,000,0
6.	"Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն" ՀՈԱԿ-ի շենքի տանիքի հիմնավոր նորոգում:	14,000,0
7.	Արտաշատ համայնքի "Իսակով" պայմանական նոր թաղամասի խմելու ջրագծի կառուցում:	5,000,0
Ընդամենը		
Ընդհանուրը		

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ

ԱՂՅՈՒՄԱԿ 5. ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ.

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
<p>Ոլորտային նպատակ</p> <p>Ապահովել տեղական ինքնակառավարումն Արտաշատ համայնքում: Ձգտել ունենալու համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային, թափանցիկ և հասանելի համակարգ</p>		<p>Ոլորտի ազդեցության /վերջնական արդյունք/ ցուցանիշ</p> <ul style="list-style-type: none"> - Համայնքի բնակչության բավարարվածությունը /հարցումների հիման վրա/ համայնքապետարանից և մատուցվող հանրային ծառայություններից 90 %, - համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքի ղեկավարի և ավագանու կողմից ընդունված որոշումների նախապատրաստման գործընթացի մեջ – 10 %, - Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում 54,7 %, 			
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների գործունեության պահպանում					
Ծրագրի նպատակը՝ բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունք/ ցուցանիշ բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը՝ լավ	Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2018 թվականի հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն:
Միջանկյալ արդյունք 1 Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը	Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ / 1.Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը՝ 71	Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ ՀԿ-ներ և խմբեր, բնակիչներ	Համայնքի ղեկավար աշխատակազմի քարտուղար	2018 թվականի հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն

	<p>2. Աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացում, 5 %</p> <p>3. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 273 օր</p> <p>4. Համայնքի պաշտոնական կայքի առկայությունը՝ այո</p> <p>5. Համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչներ կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 15 %:</p> <p>6. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման</p>				
--	--	--	--	--	--

	մակարդակը՝ 100 %: 7.Աշխատակա զմում ստացված մեկ դիմումին պատասխանե լու միջին ժամկետը՝ 5 օր				
Միջոցառումներ 1.Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում 2.Քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ 3.Համակարգչային ծառայությունների ձեռքբերում 4.Վերապատրաստում և մասնագիտական հմտությունների ձեռքբերում		Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ / 1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 135,031,1 դրամ. 2.Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը՝ 71 3.Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4.Համայնքապետարանի վարչական շենք և գույք: 5.Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվ՝ 37 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք:www artashat .am			
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում					
ՀՀԶԶ-ում 2018 թվականին պաշտպանության կազմակերպման ծրագրեր չեն նախատեսվում					
Միջոցառումներ Համայնքապետարանի աշխատակազմի միջոցառումների պլանով նախատեսված է էլ ավելի ամրապնդել կապը համայնքի տարածքում գործող զինվորական գորամասերի հետ: Տոնական օրերին, տարելիցներին կազմակերպել այցելություններ, շեֆական համերգներ և այլն: Այդ բոլորը նպատակաուղղել երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդմանն ու բարելավմանը:		Մուտքային ցուցանիշներ 1.Բարձր դարանի դպրոցականների մասնակցությունը կազմակերպված միջոցառումներին 2.փորձի փոխանակում, նորակոչիկ երիտասարդներին նախապատրաստելու համար			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում:					
ՀՀԶԶ-ում 2018 թվականին Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտում հիմնավոր ծրագրեր չեն նախատեսվում: Նախատեսված են ստորև ներկայացված միջոցառումները:					
Միջոցառումներ Մշտապես մասնակցել նշված ոլորտային		Մուտքային ցուցանիշներ /ներառված ռեսուրսներ/ Աշխատանքները նպատակաուղղել համայնքի բնակչության			

նպատակով կազմակերպված միջոցառումներին, սեմինարներին, հայտարարված ուսուցողական տազնապների և գորավարժություններին:		իրագրելմանը:			
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում ապահովել որակյալ ծառայությունների մատուցումը		Ոլորտի ազդեցության /վերջնական արդյունքի/ ցուցանիշներ Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից 80 %			
Ծրագիր 1. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնովին նորոգում					
Ծրագրի նպատակը՝ Ունենալ հիմնավոր վերանորոգված տանիք, որն հնարավորություն կտա բնակելի շենքերի 5-րդ հարկում ապրող բնակիչներին բավարար պայմաններում և բարեկեցիկ կյանքով ապրելու համար:	Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունքի/ ցուցանիշներ Տանիքների վերանորոգման կարիք ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի տեսակարար կշիռը տանիքները վերանորոգված շենքերի մեջ կկազմի 40 %-ը:	Ծրագրի գնահատման համակարգ Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2018 թվական հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<u>Միջանկյալ արդյունք 1</u> 5-րդ հարկում ապրող բնակիչների ապրելակերպում դրական փոփոխություններ կկատարվի	Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ / - բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը, որոնց տանիքները արդեն հիմնովին	Աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ, խմբեր, բնակիչներ		2018 թվական սեպտեմբեր-հոկտեմբեր	համապատասխան մարդկային, տեխնիկական ռեսուրսներն առկա են ֆինանսական միջոցները անհրաժեշտ է ձեռք բերել

	<p>վերանորոգվել են -19 նորոգված շենքերում բնակվող բնակիչների բավարարվածությունը 95 % - շինարարական աշխատանքների իրականացման ժամկետը՝ 60 օր</p>				
<p><u>Միջոցառումներ</u></p> <p>Արտաշատ համայնքում բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնավոր նորոգում</p>		<p><u>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ցուցանիշներ/</u></p> <p>- համայնքի բյուջեի միջոցներ 17.000.0 հազար դրամ - վերանորոգման աշխատանքներում ընդգրկված աշխատողների թիվը՝ 30</p>			
<p>Ծրագիր 2. Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հիմնովին նորոգում</p>					
<p><u>Ծրագրի նպատակը</u></p> <p>Բարելավել բազմաբնակարան բնակելի շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի վիճակը</p>	<p><u>Ծրագրի ազդեցությունը /վերջնական արդյունքի/ ցուցանիշ</u></p> <p>Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի վիճակը միջին բավարար</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>համայնքի ղեկավարի տեղակալներ</p>	<p>2018 թվական 2-րդ կիսամյակ</p>	<p>Առկա են համապատասխան մարդկային տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ</p>
<p><u>Միջանկյալ արդյունք</u></p> <p>Բարելավել է Արտաշատ համայնքի բնակչությանը մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի</p>	<p><u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ/</u></p> <p>- Վթարային վիճակում գտնվող ներքին ցանցերի հիմնովին վերանորոգում /12 բազմաբնակարան/ բնակելի շենքում: Աշխատանքների</p>	<p>Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ և խմբեր բնակիչներ</p>			<p>Առկա են համապատասխան ֆինանսական ռեսուրսներ</p>

մատակարարման որկր:	իրականացման ժամկետը՝ 2018 թ. հուլիս-նոյեմբեր				
<u>Միջոցառումներ</u> - Ջրամատակարարման, ջրահեռացման ներքին ցանցի վերանորոգման համար նախագծային, նախահաշվային փաստաթղթերի պատրաստում:		Մուտքային ցուցանիշներ /ներառված ռեսուրսներ/ - Անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերում: - Ֆինանսական միջոցների ապահովում			
Ծրագիր 3. Բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի դռների, աստիճանավանդակների նորոգում:					
<u>Ծրագրի նպատակը</u> Մուտքերն ու աստիճանավանդակները դարձնել հարմարավետ :	<u>Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունք/ ցուցանիշ</u> - բնակիչների անվտանգ մուտք և ելք - ցուրտ եղանակներին մուտքերում ջերմային ռեժիմի պահպանում:	Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	համայնքի ղեկավար	2018 թվական հունվար-դեկտեմբեր	համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<u>Միջանկյալ արդյունք 1</u> Արտաշատ համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի դռներն ու աստիճանավանդակները դարձել են հարմարավետ բնակիչների համար:	<u>Ելքային ցուցանիշները /քանակ, որակ, ժամկետ/</u> - վերանորոգման ենթակա մուտքերի դռների քանակը 48 - վերանորոգման ենթակա աստիճանավանդակների քանակը 48				մարդկային, տեխնիկական ռեսուրսները առկա են: Ֆինանսական ռեսուրսները պետք է ձեռք բերել:
<u>Միջոցառումներ</u> Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների ապրելակերպի բարելավում և նորմալ պայմանների ապահովում:		Մուտքային ցուցանիշներ /ներառված ռեսուրսներ/ - համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ 5.200.0 հազ. դրամ:			
Ծրագիր 4. „Արտաշատ համայնքի թիվ 5 մանկապարտեզ, ՀՈԱԿ-ի 2-րդ մասնաշենքի տանիքի հիմնավոր նորոգում: 2-րդ մասնաշենքի ներքին հարդարման աշխատանքների կատարում					
<u>Ծրագրի նպատակը</u>	<u>Ծրագրի ազդեցության</u>	Ծրագրի գնահատման	համայնքի	2018	համապ

<p>Նախադպրոցական երեխաների կրթության և դաստիարակության գործընթացն իրականացնել հնարավորինս ավելի հարմարավետ շենքերում և շինություններում:</p>	<p><u>/վերջնական արդյունքի/ ցուցանիշները</u></p> <p>Երեխաների ընդունելության, կրթության և դաստիարակության համար ստեղծված պայմանները՝ բավարար</p>	<p>համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>դեկավար</p>	<p>թվական հունվար-դեկտեմբեր</p>	<p>ատասխան, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><u>Միջանկյալ արդյունք 1</u></p> <p>նախադպրոցական երեխաների կրթության և դաստիարակության համար կոչված կազմակերպության շենքը դարձել է վերանորոգված, գեղեցիկ և հարմարավետ</p>	<p><u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ/</u></p> <ul style="list-style-type: none"> - վերանորոգված և վերականգնված շենքի ընդհանուր մակերեսը 1500 քմ - նախադպրոցական հիմնարկներում հաճախողների թիվը 943 - Շահառուների բավարարվածությունը՝ 90 % 	<p>աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ ՀԿ-ներ և խմբեր, բնակիչներ</p>			<p>համապատասխան մարդկային, տեխնիկական ռեսուրսները առկա են: Ֆինանսական ռեսուրսները պետք է ձեռք բերվեն</p>
<p><u>Միջոցառումներ</u></p> <p>Նախադպրոցական երեխաների նախակրթական, հանգստի, սննդի ապահովման և այլ ծառայությունների սպասարկում</p>			<p><u>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ</u></p> <ul style="list-style-type: none"> - համայնքային բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ 20.000.0 հազ.դրամ - նախադպրոցական երեխաների նախակրթական, հանգստի, սննդի կազմակերպման համար կոչված աշխատակիցների թիվը 186 մարդ 		
<p>Ծրագիր 5. „Արտաշատի քաղաքային արտադպրոցական կենտրոն,, ՀՈԱԿ-ի հիմնական մասնաշենքի և հանդիսությունների դահլիճի հիմնավոր նորոգում</p>					

<p><u>Ծրագրի նպատակը</u></p> <p>Արտադարձրոցական կենտրոն հաճախող երեխաների կրթության և դաստիարակության գործունեություն իրականացնել հնարավորինս առավել հարմարավետ, բարեկարգված և վերանորոգված շենքերում և շինություններում:</p>	<p><u>Ծրագրի ազդեցություն /վերջնական արդյունքի/ ցուցանիշները</u></p> <p>Արտադարձրոցական կենտրոն հաճախող երեխաների կրթության, դաստիարակության, ժամանցի գործընթացի համար ստեղծված պայմաններ` լավ:</p>	<p>Ծրագրի գնահատման կամակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ:</p>	<p>համայնքի ղեկավար</p>	<p>2018 թվական հունվար-դեկտեմբեր</p>	<p>համապատասխան տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><u>Միջանկյալ արդյունք 1</u></p> <p>Արտադարձրոցական կենտրոն հաճախող երեխաների կրթության, դաստիարակության, ժամանցի գործընթացի համար կոչված կազմակերպության շենքը դարձել է վերանորոգված, գեղեցիկ և հարմարավետ:</p>	<p><u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամանակ/</u></p> <ul style="list-style-type: none"> - վերանորոգված շենքի և շինության ընդհանուր մակերեսն է 1500 քմ - Արտադարձրոցական կենտրոնում հաճախող երեխաների թիվը 495 երեխա - Շահուռների բավարարվածությունը – 90 % 	<p>Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ, խմբեր, բնակիչներ</p>			<p>համապատասխան մարդկային, տեխնիկական ռեսուրսները առկա են: Ֆինանսական ռեսուրսները պետք է ձեռք բերվեն:</p>
<p><u>Միջոցառումներ</u></p> <p>Արտադարձրոցական կենտրոն հաճախող երեխաների կրթության, դաստիարակության, ժամանցի կազմակերպման և այլ ծառայությունների սպասարկում</p>			<p><u>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ/</u></p> <ul style="list-style-type: none"> - համայնքային բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ 5.300.0 հազ.դրամ - Արտադարձրոցական կենտրոն հաճախող երեխաների թիվը 495 մարդ - Արտադարձրոցական կենտրոնի աշխատողների թիվը` 44 մարդ 		

Ծրագիր 6. Համայնքի Օգոստոսի 23, Մարքսի, Իսակով փողոցների լուսավորության ցանցի վերակառուցում

<p><u>Ծրագրի նպատակը</u></p> <p>- Ապահովել համայնքի կենտրոնական փողոցների լուսավորությունը գիշերային /համաձայն ժամանակացույցի/ ժամերին: - Բարձրացնել անվտանգ երթևեկության մակարդակը, տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:</p>	<p><u>Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունքների/ ցուցանիշները</u></p> <p>- գիշերային ժամերին լուսավորության ապահովում: - Անվտանգ երթևեկության մակարդակի բարձրացում;</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություն</p>	<p>համայնքի ղեկավար</p>	<p>2018 թվական հունվար-դեկտեմբեր</p>	<p>համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><u>Միջանկյալ արդյունք 1</u></p> <p>Արտաշատ համայնքի կենտրոնական փողոցները դարձել են ավելի լուսավոր, անվտանգ երթևեկության առումով դարձել են ավելի հարմարավետ և անվտանգ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար:</p>	<p><u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ/</u></p> <p>- համայնքի լուսավորված փողոցների երկարությունը` 9 կմ - Տեղադրված են հենասյուներ և լուսատուներ` 520 հատ - լուսավորված փողոցների տեսակարար կշիռը ընդհանուր փողոցների համեմատությամբ 50 % - ամռանը լուսավորության ժամերի թիվ- 4 - ձմռանը լուսավորության ժամերի թիվ - 6 - բնակչության բավարարվածությունը` 60 %</p>	<p>Աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ, խմբեր, բնակիչներ</p>			<p>համապատասխան մարդկային, տեխնիկական ռեսուրսները առկա են: Ֆինանսական միջոցները պետք է ձեռք բերել</p>
<p><u>Միջոցառումներ</u></p> <p>- Արտաշատ համայնքի լուսավորության ցանցի սպասարկում</p>			<p>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ/</p> <p>- համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական</p>		

				միջոցներ լուսավորության ցանցի վերակառուցման և վերանորոգման համար՝ 2.300.0 հազ. դրամ - լուսավորության ցանցի սպասարկման համար 6.500.0 հազ. դրամ	
Ծրագիր 7. Համայնքի Բուդաղյան փողոցի, „Իսակով,, պայմանական թաղամասի խմելու ջրագծերի կառուցում					
<u>Ծրագրի նպատակը</u>	<u>Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունքների ցուցանիշները</u>	Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություն	համայնքի ղեկավար	2018 թվական հունվար-դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների առկայությունը
Ապահովել Արտաշատ համայնքի Բուդաղյան փողոցի և „Իսակով,, պայմանական թաղամասի բնակչությանը խմելու ջրով	- ջրամատակարարման խնդրի լուծումը բնակչության այդ մասի համար՝ բավարար:				Համապատասխան մարդկային, տեխնիկական ռեսուրսները առկա են: Ֆինանսական միջոցները պետք է ձեռք բերել
<u>Միջանկյալ արդյունք 1</u>	<u>Ելքային ցուցանիշները /քանակ, որակ, ժամկետ/</u>	Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ և խմբեր, բնակիչներ			
Արտաշատ համայնքի Բուդաղյան, „Իսակով,, պայմանական թաղամասի բնակիչները մատակարարվում են մաքուր, սառնորակ խմելու ջրով	- խմելու ջրի նորակույց ցանցի երկարությունը՝ Բուդաղյան փողոց - 200 մ „Իսակով,, պայմանական թաղամաս - 400 մ - Ավելի քան 100 բնակիչներ կապահովվեն խմելու որակյալ ջրով:				
<u>Միջոցառումներ</u>			<u>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ/</u>		
Արտաշատ համայնքի Բուդաղյան փողոցի և „Իսակով,, պայմանական թաղամասի բնակիչների խմելու որակյալ ջրի մատակարարում			- Համայնքի բյուջեից նախատեսված ֆինանսական միջոցներ		

					ջրամատակարարման խողովակաշարը կառուցելու համար 7.000.0 դրամ - Ջրամատակարարման ցանցից օգտվող բնակիչների թիվը 100
Ծրագիր 8. Համայնքային աղբատար տանող շրջանցիկ ճանապարհի կառուցում:					
<u>Ծրագրի նպատակը</u> - ապահովել աղբատար մեքենաների մոտեցումը աղբատեղին: - Ապահովել համայնքի աղբատեղի ճիշտ և ժամանակին սպասարկումը	<u>Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունքի/ ցուցանիշները</u> Աղբահանության և աղբավայրի տեղափոխության խնդիրը կհամարվի բավարար	Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակի, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ և խմբեր, բնակչություն	Համայնքի ղեկավար	2018 թվակ ան հունվ ար- դեկտե մբեր	Համապ առասխ ան մարդկայ ին, տեխնիկ ական և ֆինանս ական ռեսուրս ների առկայու թյունը:
<u>Միջանկյալ արդյունք 1</u> Հարմարավետ է և անվտանգ համայնքային աղբավայր տանող ճանապարհը:	<u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ/</u> - կառուցվող ճանապարհի երկարությունը - 1200 մ - ճանապարհը հարթեցվելու և կավճապատվելու է:	Աշխատակազմ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ և խմբեր, բնակիչներ			Համապ առասխ ան մարդկայ ին, տեխնիկ ական, ֆինանս ական ռեսուրս ները առկա են:
<u>Միջոցառումներ</u> Համայնքի տարածքում սանիտարական մաքրման և աղբահանության անվտանգ և հարմարավետ կազմակերպում:			<u>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ/</u> - Համայնքի բյուջեից նախատեսված ֆինանսական միջոցներ շրջանցող ճանապարհը հարթեցնելու և կավճապատելու համար 1.000.0 հազ.դրամ		
Ծրագիր 9. Արտաշատ համայնքի սեփականությունը համարվող երկու գերեզմանատների հատակագծերի կառուցում, չափագրում, հնարավոր տարածքի ընդլայնում, լուսավորության ցանցի կառուցում					

<p><u>Ծրագրի նպատակը</u></p> <p>- Բարելավել Արտաշատ համայնքի գերեզմանատների պահպանման ծառայության որակը</p>	<p><u>Ծրագրի ազդեցության /վերջնական արդյունքների/ ցուցանիշները:</u></p> <p>Արտաշատ համայնքի բնակչությանը մատուցվող հուղարկավորման ծառայությունների որակը՝ բավարար</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>համայնքի ղեկավար</p>	<p>2018 թվական հունվար-դեկտեմբեր</p>	<p>Համայնքի բյուջեից անհրաժեշտ ֆինանսական միջոցները ժամանակին հատկացվում են</p>
<p><u>Միջանկյալ արդյունք</u></p> <p>Բարելավվել է Արտաշատ համայնքի բնակչությանը մատուցվող գերեզմանատների պահպանման ծառայության որակը:</p>	<p><u>Ելքային ցուցանիշներ /քանակ, որակ, ժամկետ/</u></p> <p>- գերեզմանատների վիճակը՝ բավարար - տարածքը ընդլայնված է 7000 քմ-ով - աշխատանքների իրականացման ժամկետն է 2018 թ. 1-ին կիսամյակի ընթացքում</p>	<p>Աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, ՀԿ-ներ և խմբեր, բնակիչներ</p>			<p>համապատասխան ֆինանսական միջոցներն առկա են</p>
<p><u>Միջոցառումներ</u></p> <p>Արտաշատ համայնքի գերեզմանատների չափազրույմ, ընդհանուր հատակագծի կազմում, տարածքի ընդլայնում, լուսավորության ցանցի կառուցում:</p>			<p>Մուտքային ցուցանիշներ /ներդրված ռեսուրսներ/ - չափազրույմ, ընդհանուր հատակագծի կազմման համար կապված ծախսեր 3000 հազ.դրամ - տարածքի ընդլայնման համար ծախսեր՝ 2.500.0 դրամ - լուսավորության ցանցի կառուցման համար ծախսեր՝ 1.000.0 դրամ</p>		
<p>Ծրագիր 10. Արտաշատ համայնքի քաղաքային լճի շրջակայքի բարեկարգում, լճի հատակի մաքրում տիղմից և այլ վնասակար նյութերից</p>					
